

ԳԵՂԱՐՈՒԵՍՏՔ

Լայնություն

Յոյն արձանագործներու ձեռքէն ելած գլխաւոր հրաշալեաց մէկն է Լայնությունի խմբարձանը՝ որն որ շատ աւելի երկար կեանք ունենալով քան զիւր ճարտարագէտները՝ բազմաթիւ դարերու օրերը տեսեր է, և հիմա ալ Սատիկանու արձանաց հռչակաւոր մուսէոնին երեւեալոյն զարդերէն մէկն է։

Խմբարձանիս պատմութեան նիւթը ողբերգական ու գորովաշարժ է, ուրուագորութիւնը հրաշալի, զգացմանց բացատրութիւնը վսեմ, ու փորուածքին փափկութիւնը գերազանց. այս սակաւագիւտ յատկութիւններովն է որ Պլինիոսի ժամանակէն ի վեր ընտրելագոյն կը սեպուէր քան ուրիշ այնչափ յունական արձանները, որ ան միջոցին կը գտնուէին. և ուլ որ ճշմարիտ գեղեցկութեան գաղափարն ունի, ասի-

կայ տեսնելով սիրտը կը շարժի ու կը գորովի անոր դիւցազնին վրայ։ Լայնություն, որն որ հայրենեաց սիրովը բորբոքած՝ հակառակ կեցաւ որ Դանայեանց փայտակերտ ձին Տրոյացիք իրենց քաղաքը չմտցնեն, և աս գործողութեամբս ընդդիմացաւ բաղդին՝ որ այդ քաղքին կործանումը երգուընցեր էր, ներկայացուցած է այդ խմբարձանին մէջ մեռնելու վիճակ հասած իր երկու պատանի որդւոցը հետ՝ երկու ահաւոր օձերու խածուածքներէն, որոնք իրենց գալարմունքներովը սեղմած են զանոնք ուժով։ Օասոնք Լութենաս, որ Տրոյացւոց ամենէն աւելի ոխերիմ թշնամին էր, խրկած է պատժելու այս դժբաղդ ծերունին, որուն յանցանքն է ճշմարտութիւնը ճանչցած ու զան յայտնած ըլլալը կուրացեալ ժողովրդեան մը, և ևս առաւել՝ Լութենասայ նուիրուած ձիոյն իր նիզակովը հարուած մը տալը. ինչպէս որ կը կարգանք Սիրգիլիոսի Լյնէականին մէջ։

Ընդ Լայնություն համախոհիւք յոգներամ
Յառաջադէմ ամենեցուն ի բարձանց
Դիմեալ դղեկին ի վայր, վառեալ ի նախանձ,
Եւ ի բացուստ՝ Օխորդ այդքան անմիտք էք,
Ըզաղակէ, քաղաքացիք իմ դուք հէք.
Համարիցիք ըզթըշնամիս տարագնաց,
Ընենէք ըզնուէրըս կարծիցէք հելլենաց.
Ըյսպէս ուրեմն իցէ Ողիս ծանօթ ձեզ,
Կամ դարանեալ կան ի փայտիդ Յոյնք անտես,
Կամ պարըսպացս հաստեալ կազմածդ է յաւեր,
Ի վերելեակ մուտս ի քաղաք այսր ի մեր,
Կամ տանցս ի դէտ, կամ այլ ի դմա որոգայթ.
Ո՛հ Տեւիրացիք, մի հաւատայք յերէդ յայդ,
Ըյլ այն որ զինչ եւ իցէ, միշտ ինձ հելլենք
Ընծայաբերք իսկ խիթալի են ի նենգ.
Ըսաց, եւ բուռն ի կորով զտէգ իւր ըստուար
Չիոյն ի կողս եւ յորովայն անդր էհար,
Ի կորածեւ հիւսնեալ մածմանցն ի զօգուած.
Եւ զերերի հարեալ գըրաստն եւ եկաց,
Դըղըրդեցան յորովայնին ի բախիւն
Եւ հեծեցին սորք եւ փապարք կազմածոյն։

Գիրք Բ, 60-80։

Թշուառաբար Լայոկոմնի խօսքերէն չհամոզուեցան Տրոյացիք . և դիւցազնը
այդպիսի աղէտալի կատարածով մը զրկուեցաւ 'ի լուսոյ կենաց :

Լայոկոմնի պատիժը հետեւեալ կերպովս կը ստորագրէ Սիրգիլիոս .

Սեծ եւս ինչ անդ դիպաւ եւ եւս ահեղ յոյժ ,
Որ զեղկեկեացն յուզեաց ըզմիտս անըզոյշ :
Պիտիդոնի Լայոկոմն քուրմ վիճակեալ ,
Ի մեծաշուք բազնին զոհէր եզն ըստուար .
Նշա վիշապք կրկին , (սոսկամ 'ի պատմել) ,
Ի Տենեդեայ ընդ ծով խաղաղ եւ ընդել ,
Որորտապտոյտ վերանըստեալ 'ի յալիս ,
Նդրը դիմեալ գան զուգահէտք 'ի յափնիս :
Որոց 'ի ծովիս անդ ուղղաբերձ ցրցուեալ կուրծ ,
Եւ արինուռչտ 'ի վեր քրսմնեալ բաշքն 'ի ջուրց ,
Ի մըկանունս ալեացն 'ի սող մէջքն յենոյր ,
Պալարելով 'ի լայն ըզտուտն 'ի պարոյր .
Ի փրփրեղոց ալեացն հընչէր շառաչին :
Եւ աւասիկ հասեալք 'ի յեզըր ծովուն ,
Լըին եւ բոց սըփոեն յաչացն 'ի հրաբուն ,
Ղապուկ լեզուօքն ըզըլող քիմնն լիզուն :
Խոյս 'ի տեսոյն տըւաք հարեալք 'ի յերկիղ .
Ը Լայոկոմն ինքեանք դիմեն դէպ ուղիղ :
Եւ ըզմատաղ մարմնով երկուցն որդեկաց
Պատեալ իժիցն երկաքանչիւր շըրջամած ,
Սանեօք զանդամնն խաճատեն զեղկեկեաց .
Եւ 'ի յինքն իսկ յարձակեալք 'ի հարուած ,
Սինչ նա առեալ զէն 'ի նըպաստ նոցին գայր ,
Շուրջ կաշկանդեն 'ի լայնատարր 'ի գալար :
Երկիցս ընդ կուրծս , եւ ընդ հիքին պարանոց
Ըզթեփամորթն երկիցս ածեալ քընթընոց ,
Ըմբառնան գեր 'ի վեր գըլխով եւ ուլամբ :
Եւ մերթ խըզել ճըգնի զհանգոյցսն ձեռամբ ,
Ըզվարսակալ նարօտսն շուրջ 'ի շարաւ
Համակելով եւ թուխ 'ի թոյնըս թաթաւ .
Եւ մերթ ողորմ բառնայ յաստեղս աղաղակ ,
Որպէս առեալ վերս 'ի բազնի զըւարակ՝
Ըծէ բառաչ 'ի թօթափեն ըզտապար
Ըզտարադէպ 'ի պարանոց իւր իջեալ :
Եւ վիշապքն սողոսկեալ երկուորեակք ,
Տրիտոնական վէս դիցուհւոյն 'ի դըղեակ
Ի բարձուանդակն դիմելով 'ի մեհեան ,
Տիկնոջն առ ոտս ընդ ասպարաւն ամրանան :

Գիրք Բ , 297-334 :

Սակայն Սիրգիլիոս իր նկարագրու-
թեան մէջ հաւասարած չէ երեք հռո-
դացի արձանագործներուն , որոնք վեր-
ջին աստիճանի ազնուականութիւն տը-
ւած են նիւթոյն ու խիստ դուրս ցատ-

քեցուցած են զայն՝ : Պանք հիմա

1 Լէօնիկ գերմանացի երևելի գրականը՝ Վեր-
գիլիոսի ըրած նկարագրութեան վերոյիշեալ տո-
ղերը բաղդատելով Լայոկոմնի խմբարձանին հետ ,
ասկից նիւթ առաւ ու շարագրեց Լայոնի ըստած

տեսնելու թէ այդ արձանագործները
ինչ ոգի ու ինչ կերպ տուած են իրենց
| այոկոմին :

Այս տեսարանին գլխաւոր անձն է՝
Թագաւորական ցեղէ ինջած ու աս-
տուածներէն սերած մարդ մը , որ այ-
րական հասակի մէջ է՝ այսինքն հոգւոյն
կարողութիւնները ամենէն բարձրա-
գոյն աստիճանի կատարելութեան հա-
սած են և մարմինն ալ իր զօրութիւնն
ու առուգութիւնը անարատ պահած
է : Աիւցազնը մեռնելու վրայ է՝ ահա-
ւոր ու սոսկալի մահուամբ մը . գիտէ
ինքը որ իր յանցանքը՝ հայրենեաց վը-
րայ ունեցած սիրոյն արդիւնքն ըլլա-
լով , աստուածոց իրեն խրկած պատի-
ժը իր սրտին խիղճ մը չկրնար ըլլալ ա-
մենեւին : Արձաննայ իր անմեղու-
թիւնը , և սակայն կը տեսնէ որ իր քա-
ղաքակցաց առջև իբրև սրբապիղծ մը
կը մեռնի . և թէպէտ կը գուշակէ որ
իր կրած պատուհասը իրեն խոհեմու-
թեան արդարացի ըլլալուն նշանն է ,
այլ այս գաղափարը՝ իր հայրենեաց կոր-
ծանման ու քանդման գաղափարին հետ
միանալով , փոխանակ զինքը միւթա-
րելու՝ առաւել ևս կը վշտացնէ : Այս
միայն իր կրած տանջանքներովը չէ որ
կը տառապի . տեսնելով իր որդիքները՝
անմեղ իրեն պէս՝ իրեն հետ մէկտեղ
Պալասայ բարկութեան զոհ եղած ,
սիրտը կտոր կտոր կ'ըլլայ ու բիւր ցա-
ւերով կը վերաւորի՝ իր հայրական սի-
րոյն ու գթոյն սաստկութեամբ բոր-
բոքած : Այս 'ի վերայ այսր ամենայ-
նի՝ չզղջար իր ըրած նախանձախնդրու-
թեանը վրայ , և իր խղճմտանաց վը-
կայութիւնը քան զաստուածոց զայ-
րոյթն ու քան զմարդկանց կարծիքը
վեր կը սեպէ : Ահա այս վեհ մտածու-
թիւնը տպաւորած են խմբարձանիս վը-
րայ | այոկոմի ճարտարագէտները . և
իրենց երկրթէ քանդակիչ գրչովը ան

հետաքնին ու իմաստուն գրութեքը , յորում
բանաստեղծութեան և ուրուագրական արուես-
տից մէջ եղած սահմաններուն վրայ կը խօսի :

Այսպիսի հակասութիւն մը մոլար ու խա-
բէական կրօնից մէջ միայն կրնայ գտնուիլ :

աստիճանի յաջողած են ասոր մէջ , որ-
չափ որ նոյն ինքն իսկ ճոխաբան ճար-
տասանութիւնը չկրցաւ ընել :

| այոկոմն նստած է բազնին վրայ ,
ուր որ իր երկու որդւոցը հետ զոհ մը
կը պատրաստէր Պոսիդոնի : Արձանա-
գործը անանկ մը ձեւացուցած է , իբրև
թէ օձերուն յարձակմունքէն՝ | այո-
կոմն ինկեր նստեր է : Այդ կենդանի-
ներուն դէմ կռուելու բռնութենէն՝
սասեր է վրայէն իր վերարկուն ու բա-
զնին վրայ գացեր տարածուեր է :

Օ | այոկոմն նստեցնել տալու մտա-
ծութիւնը՝ կարգէ դուրս գեղեցիկ է .
որովհետեւ ասով կ'երևայ , որ դիւցազ-
նը այն ահեղ կռուոյն միջոցը ինքըզին-
քը երկար առեն ոտքի վրայ բռնելու
ուժ չէ ունեցած , և դարձեալ ասով
այնպիսի դրքի մէջ է՝ որ դեռ կրնայ
դէմ կենալ , ու բոլորովին տկարացեալ
ձեւացուցած չէ : Արձանին ամենայն
մասերը կը միանան ցուցնելու դիւց-
ազն մը , որ կ'ընկճի՝ բայց առանց
նուազմանալու , որովհետեւ ինքըզինքը
յանցաւոր չգգար : Վրուխը ծռած
չէ , մանաւանդ թէ ընդ հակառակն
ճշմարիտ ազդու կերպով մը դէպ 'ի եր-
կինք վերցուցած է , կարծես թէ անոր
անիրաւութիւնը յանդիմանելու հա-
մար : Արպարանքը հասուն մարդու
դէմք է , որ զարմանալի աղուորու-
թեամբ մը զարդարուած է . գծագրու-
թեանը վրայ տպաւորուած է հոգւոյն
առաքինութեան նշանը . և թէպէտ
բռնն ցաւերով տագնապած , դէմքին
վրայ միշտ քաղցրութիւն մը կը փայլի ,
որ տեսնողին վրայ մեծ ազդեցութիւն
կ'ընէ : Այց ան կնձուած ճակտին վը-
րայ , և ան տրտմութեամբ հալած ա-
չուրներուն վրայ՝ ցաւերէ աւելի տիրած
կ'երևայ կարեկցութիւնն որ կ'իմանայ
իր որդւոց ներկայ մահուան , ու հայրե-
նեաց մերձակայ կործանման վրայ :
Աստիճակայ վրայութեան պատճառաւ ու
գլխուն վեր վերցուելովը խառնակած
մազերը՝ բոլորովին բաց կը թողուն իր
ճակատը , ու իր դէմքին պայծառութի-
ւնը կու տան 'ի մէջ այնչափ տառապա-

նաց, որ հակառակ զգայմունքներէ ա-
խորժելի միութիւն մը կը կազմէ :

Իսաղուհներն ու ձեռքերը շարժման
մէջ են, որպէս զի կարենայ թօթափել
իր վրայէն այն հրէշանման օձերը՝ որ
պատած են զինքը, ու անոնց մահաբեր
ակռաներէն ազատել իր անդամները .
բայց միանգամայն յայտնի կ'ըլլայ, որ
անկարելի է անոնց յաղթել : Կուրծ-
քը ուռած է կրած ցաւերուն, իր ը-
րած ճգնաց, ու զգացած զօրովանքե-
րուն ուժգնութենէն : Փորը կծկած
է իր մարմնոյն ցնցմունքներէն, որոնց
շարժմունքը կը տեսնուի ամէն անդա-
մաց վրայ՝ ինչուան ոտուրներուն ծայրե-
րը : Եւ սակայն բոլոր այս բաները՝
կերպարանքին աւելի գերազանցութի
կու տան . դուրս տնկուած ու ծփեալ
կուրծքը ազնուութիւն մը կու տայ ա-
նոր, աւելի վեհ կ'ընէ զայն, և առ-
արտաքս աւելի ուժով . ոտուրներուն
ու ձեռուրներուն կծկած ծայրերը կը
ցուցնեն որ թուլցած, ուժաթափ չէ
Եւրոպէն, ու իրեն դիմադրութիւն ը-
նելու կարողութեանը ապացոյց են :

Կը շարունակուի :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուդովիկոս ԺԶին վարքն ու մահը :
(Տես Հտ . ԺԵ . երես 377)

Երբոր Պ . Մալերայ երթալու վրայ
էր, հրաման եղաւ որ կարենայ թա-
գաւորին հետ առանձին խօսիլ . ան ա-
տեն թագաւորը զինքը իր ներքին սե-
նեակը տարաւ, ու դուռն ալ գոցելով՝
գրեթէ ժամ մը հետը խօսեցաւ : Թա-
գաւորը հետը ընկերացաւ ինչուան ել-
լելու դուռը, և յանձնեց որ իրիկունը
նորէն գայ, և իր վերջի վայրկեաննե-
րուն զինքը ձեռքէ չթողու : Եւ խուցը
դառնալու ատեն թագաւորը ըսաւ ին-
ձի . “ Եւրոպէս բարի ծերունայն ցաւը
վրաս շատ մեծ տպաւորութիւն ըրաւ ,” :

Պ . Մալերային գալէն վերջը սաս-

տիկ տազնապի ու երկիւղի մը մէջ էի .
բայց հանդերձ այսու ամենայնիւ պատ-
րաստեցի ածիլելու հարկաւոր բաները :
Թագաւորը օձաւոր քսեց երեսին . ես
իր դիմացը ոտքի վրայ կեցեր էի՝ ձեռքս
կոնքը բռնած, և ուժ կու տայի ինձի
որ ցաւս դրսէն չյայտնեմ, որով չէի
համարձակեր աչքերս իմ տարաբախտ
տիրոջ վրայ դարձնելու . բայց դի-
պուածով մը աչքս վրան գնաց, և մէ-
կէն սկսայ լալ : Կարծես թէ միտքս ի-
մացաւ, իրեն ալ դոյնը նետեց . այս որ
տեսայ, ուժէ ինկած սկսան ծնկուրներս
կտրտիլ : Թագաւորը տեսնալով իմ այ-
լայլութիւնս, երկու ձեռքովը զիս ու-
ժով մը բռնեց, ու ցած ձայնով մը ը-
սաւ, (վրան զի ետեւիս կեցած զմեզ
կը դիտէին) . “ Ի՛նչ չկայ, բան չկայ .
պէտք է աւելի ամուր բռնենք զմեզ ,” :
Եւրոպէս իր այլայլութիւնը անցաւ, ու
հանդարտութեամբ մօրուքը ածիլեց .
և ես ալ իրեն օգնեցի հագուելու հա-
մար :

Թագաւորը խուցին մէջ մնաց, և
կարգաւոր ու քալելով անցուց ինչուան
կերակրոյ ատենը : Իրիկունը երբոր
տեսայ որ իր ներքին սենեակը կ'եր-
թար, ես ալ հետը ետեւէն գացի, ձեւ-
ցնելով որ բան մը կ'ուզէ ինձմէ : —
“ Եւրոպէս իմ դատաստանիս պատմու-
թիւնը ,” , ըսաւ ինձի թագաւորը : —
“ Եւրոպէս, տէր իմարքայ, պատասխանեցի
ես իրեն , յուսանք որ դոնէ վճռոյն կա-
տարումը ուշացնեն , ինչպէս որ կը
կարծէ Պ . Տը Մալերայ ,” : — “ Ի՛նչաւ
բանի մը յոյս չունիմ, պատասխանեց
թագաւորը . բայց ինձի համար մեծ
ցաւ է տեսնալը որ () ուլէանի դուքսն ալ
իմ մահուանս կը փափաքի ,” : Եւ ատեն
ծոյկէն հանեց ու տուաւ ինձի Եւրոպէս
ատենին որոշմունքը : — “ Եւրոպէս
դը, ըսի ես , աս եղածներուն դէմ ձայ-
նը սկսեր է բարձրացնել . Տիւմուրիէ
Իսթրիա է, և կ'ըսուի որ իր զօրաց կար-
ծիքը հրամանքիդ կողմն է , հակառակ
հրամանքիդ դէմ եղած որոշմանը : Եւ
զովուրդը () ուլէանի դքսին բռնած ա-
նիրաւ ճամբուն դէմ զայրացած է . և